ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՒԹԵՐՈՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Ազգային ժողովի խորհուրդը **որոշում է.**

հաստատել Ազգային ժողովի ութերորդ գումարման երրորդ նստաշրջանի օրակարգում լրացումներ կատարելու մասին նախագիծը:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ,
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ **Ռ. ՌՈՒԲԻՆՅԱՆ**

2022 թվական, մարտի 21
Երևան
ԱԺԽՈ-017-Լ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՒԹԵՐՈՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԵՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

1. «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ութերորդ գումարման երրորդ նստաշրջանի օրակարգում լրացուցիչ ընդգրկել պարտադիր քննարկման ենթակա հետեւյալ հարցերը.

	Հարցի անվանումը	Կոդը և հեղինակները
1.	**ա)** Քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին	Պ-**156**-04.02.2022-ՊԻ-011/0 Հեղինակներ՝ Իշխան Սաղաթելյան, Արամ Վարդեւանյան, Աղվան Վարդանյան
	բ) Քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին	Պ-**156**[1]-04.02.2022-ՊԻ-011/0 Հեղինակներ՝ Իշխան Սաղաթելյան, Արամ Վարդեւանյան, Աղվան Վարդանյան
2.	Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 28-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի (2021-2026 թթ.) 2021 թվականի կատարման ընթացքի եւ արդյունքների զեկույցի մասին» N 234-Ա որոշմամբ հավանության արժանացած զեկույցը	**176**-28.02.2022-
3.	Կենտրոնական ընտրական հանձնաժողովի գործունեության մասին 2020-2021 թվականների հաղորդում	**197**-14.03.2022-ՊԻ
4.	«Արցախի Հանրապետությունում ստեղծված հումանիտար իրավիճակը, սպառնալիքները եւ հրատապ անելիքները» հասարակական հետաքրքրություն ներկայացնող թեմայով հրատապ քննարկում անցկացնելու մասին	**198**-14.03.2022-
5.	Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի անդամի ընտրություն	**202**-18.03.2022-

2. «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ութերորդ գումարման երրորդ նստաշրջանի օրակարգում լրացուցիչ ընդգրկել գլխադասային հանձնաժողովի կողմից դրական եզրակացություն ստացած հետեւյալ հարցերը.

Հարցի անվանումը	Կոդը և հեղինակները

1.	«Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին	Կ-**138**-19.01.2022-ՏՀ-011/0 Հեղինակ՝ ՀՀ կառավարություն
2.	«Նախադպրոցական կրթության մասին» օրենքում փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին	Կ-**141**-25.01.2022,**21.03.2022**-ԳԿ-011/0 Հեղինակ՝ ՀՀ կառավարություն
3.	**ա)** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին	Կ-**142**-25.01.2022-ՊԻ-011/0 Հեղինակ՝ ՀՀ կառավարություն
	բ) Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին	Կ-**142**[1]-25.01.2022-ՊԻ-011/0 Հեղինակ՝ ՀՀ կառավարություն
4.	**ա)** Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին	Կ-**143**-25.01.2022-ՊԻ-011/0 Հեղինակ՝ ՀՀ կառավարություն
	բ) «Պետական սահմանի մասին» օրենքում լրացում կատարելու մասին	Կ-**143**[1]-25.01.2022-ՊԻ-011/0 Հեղինակ՝ ՀՀ կառավարություն
5.	«Վտանգավոր բեռների միջազգային ճանապարհային փոխադրումների մասին» եվրոպական համաձայնագիրը վավերացնելու մասին	Կ-**147**-25.01.2022-ՏՀ-011/0 Հեղինակ՝ ՀՀ կառավարություն
6.	«Արժեթղթերի շուկայի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին	Կ-**150**-31.01.2022,**15.03.2022**-ՖՎ-011/0 Հեղինակ՝ ՀՀ կառավարություն
7.	«Ժամանակավոր անաշխատունակության եւ մայրության նպաստների մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացում կատարելու մասին	Կ-**151**-01.02.2022-ԱՍ-011/0 Հեղինակ՝ ՀՀ կառավարություն
8.	Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին	Կ-**152**-02.02.2022-ՏՏԳՇ-011/0 Հեղինակ՝ ՀՀ կառավարություն
9.	Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին	Պ-**157**-07.02.2022,**16.03.2022**-ՏՀ-011/0 Հեղինակ՝ Գեւորգ Պապոյան
10.	«Մարդկանց թրաֆիքինգի եւ շահագործման ենթարկված անձանց նույնացման եւ աջակցության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին	Կ-**158**-07.02.2022-ԱՍ-011/0 Հեղինակ՝ ՀՀ կառավարություն
11.	«Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին	Պ-**160**-10.02.2022-ՊԱ-011/0 Հեղինակ՝ Տիգրան Աբրահամյան
12.	Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի միջեւ 2021 թվականի նոյեմբերի 24-ին ստորագրված «Երեւանի ավտոբուսների ծրագիր» վարկային համաձայնագիրը վավերացնելու մասին	Կ-**182**-03.03.2022-ՖՎ-011/0 Հեղինակ՝ ՀՀ կառավարություն
13.	«Հայաստանի Հանրապետության, «Երեւանի ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության ու Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի միջեւ 2021 թվականի նոյեմբերի 24-ին ստորագրված «Երեւանի ավտոբուսների	Կ-**183**-03.03.2022-ՖՎ-011/0 Հեղինակ՝ ՀՀ կառավարություն

	ծրագիր» դրամաշնորհային համաձայնագիրը վավերացնելու մասին	
14.	«Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան վավերացնելու մասին	Կ-**184**-03.03.2022-ԵԻ-011/0 Հեղինակ՝ ՀՀ կառավարություն

3. «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 38-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ութերորդ գումարման երրորդ նստաշրջանի օրակարգում լրացուցիչ ընդգրկել գլխադասային հանձնաժողովների կողմից բացասական եզրակացություն ստացած, ինչպես նաեւ Կանոնակարգով սահմանված ժամկետում եզրակացություն չստացած հետեւյալ հարցերը.

	Հարցի անվանումը	**Կոդը և հեղինակները**
1.	Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն եւ լրացում կատարելու մասին	Պ-**155**-03.02.2022-ԳԿ-011/0 Հեղինակ՝ Աղվան Վարդանյան